

Թիվ: Թվի բնութագրումը:

Թիվը մաթեմատիկական օբյեկտ է, որը օգտագործվում է հաշվարկների, չափումների և համարակալման համար:

Կախված թվի գրառման թվանշանների քանակից՝ թվերը կոչվում են.

միանիշ (մեկ թվանշան), **երկնիշ** (երկու թվանշան), **եռանիշ** (երեք թվանշան) և այլն:

Օրինակներ

ա. 1 թիվը միանիշ է՝ այն գրվում է մեկ թվանշանի միջոցով:

բ. 23 թիվն ունի 2 տասնյակ և 3 միավոր: Այս թիվը գրվում է երկու թվանշանի միջոցով (2 և 3), ուրեմն, այն երկնիշ է:

գ. 468 թիվն ունի 4 հարյուրյակ, 6 տասնյակ և 8 միավոր:
Այս թիվը գրվում է երեք թվանշանի միջոցով, ուրեմն, այն եռանիշ է:

դ. 3552 թիվն ունի 3 հազար, 5 հարյուր, 5 տասնյակ և 2 միավոր:
Այս թիվը գրվում է չորս թվանշանի միջոցով, ուրեմն, այն քառանիշ է:

Դիտարկենք 5327 թիվը:

Սա **հինգ հազար երեք հարյուր քսանյոթ** թիվն է: Այն քառանիշ թիվ է:



Թվանշանի տեղը թվի գրառման մեջ կոչվում է կարգ:

5327 թիվն ունի չորս կարգ՝ հազարավորների, հարյուրավորների, տասնավորների և միավորների:

- հազարավորների կարգում 5-ն է: Այն ցույց է տալիս, թե քանի հազարյակ կա 5327 թվում,
- հարյուրավորների կարգում 3-ն է: Այն ցույց է տալիս, թե քանի հարյուրյակ կա 5327 թվում,
- տասնավորների կարգում 2-ն է: Այն ցույց է տալիս, թե քանի տասնյակ կա 5327 թվում,
- միավորների կարգում 7-ն է: Այն ցույց է տալիս, թե քանի միավոր կա 5327 թվում: